

# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**



**№ 1-19 առաջադրանքների հրահանգ** – (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր)- Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա ուղղել պատասխանն, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

(1) 1. Թվարկաձևերից դարաշրջանի և դրան բնորոշ գեղարվեստական առանձնահատկության ո՞ր գույգն է անհամապատասխան:

ճ) Բյուզանդիա-հարթային,

ծ) վերածնունդ-ծավալային,

զ) բարոկկո – հայելանման համաչափ,

զ) էքսպրեսիոնիզմ – չափազանցված:

(1) 2. Ո՞ր առանձնահատկությունը բնորոշ չէ այսօր Լուվրի թանգարանի ճարտարապետական համալիրին:



- ա) Ճարտարապետական համալիրը ներդաշնակ ամբողջություն է ստեղծում քաղաքի զարգացման հետ:
- բ) Կառույցը ստեղծվել է մի դարաշրջանում և հետագայում չի ենթարկվել փոփոխությունների և վերափոխումների:
- գ) Այստեղ վարպետորեն է կիրառված քառակողմ ճարտարապետական հատակագծումը:
- դ) Համալիրը տարբեր ճարտարապետական ոճերի համադրություն է:

(1) 3. Ո՞ր գեղարվեստական հնարքը չի կիրառում Լեոնարդո դա Վինչին Մոնա Լիզայի գեղարվեստական կերպարը ստեղծելիս:



- ա) գրադացիան,
- ծ) տենեբրիզմը,
- ց) սֆումատոն,
- ճ) օդային հեռանկարը:



(1) 4. Ո՞ր մշակույթի և/կամ ոճի նմուշ է ներկայացված նկարում:



- ա) Եգեյան,
- բ) Հին Հռոմի,
- գ) Վաղ Վերածննդի,
- դ) Մոդերնի:

(1) 5. Բոլորից շատ ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունն է ամրապնդում նախորդ # 4 առաջադրանքում ձեր կատարած ընտրությունը:



- ա) հեռանկարի օրենքների իմացության հիման վրա պատկերներ ստեղծելու վարպետությունը,
- ծ) գունային լուծումը և պաստոզությունը,
- ց) իրատեսական պատկերները և նրբին իլյուզիոնիզմը,
- Պ) շրջակա միջավայրի ընկալման ընդհանրացված բնույթը:



(1) 6. Ի՞նչ ընդհանուր կարևոր բնութագրիչներ ունեն Մոն Սեն Միշելի և Սցիսթայի Ջվարիի տաճարները:



- ա) ճարտարապետական կառուցվածքը,
- բ) դեկորատիվ ձևավորումը,
- գ) լանդշաֆտին հարմարվածությունը,
- դ) ամրաշինական համակարգը:



(1) 7. Ո՞ր ձևակերպումը չի համապատասխանում Պազոդայի ճարտարապետական և բովանդակային առանձնահատկությանը:



- ա) կառույցը կառուցված է պարուրաձև շրջապտույտի սկզբունքով,
- բ) պատից դուրս ցցված տանիքը շենքը պաշտպանում է քամուց և անձրևից,
- գ) տանիքի թեք անկյունները մարդկանց պաշտպանում են չար ոգիներից,
- դ) պազոդան կառուցվում է միայն փայտե նյութից:

(1) 8. Ո՞վ է ներկայացված քանդակային կոմպոզիցիայի հեղինակը:



- ա) Իսկոբ Նիկոլաձեն,
- ծ) Օգյուստ Ռոդենը,
- ճ) Մերսե Բերձենիշվիլին,
- դ) Հենրի Մուրը:

(1) 9. Ո՞ր գեղարվեստաոճային առանձնահատկությունը բնորոշ է ներկայացված քանդակային կոմպոզիցիային:



ա) քանդակային կոմպոզիցիան տարբեր անկյուններից նույնկերպ է ընկալվում,

բ) թեթև, գրեթե անկշիռ մարմնով աղջկա մեծ և ծանր սաբոները (փայտե տակերով կոշիկ) խիստ հակադրվում են և հաստատունություն հաղորդում գեղարվեստական կերպարին:


գ) քանդակային մտածողությունը, փափուկ ձևերը և գեղանկարչական էֆեկտները քանդակային կոմպոզիցիայի հիմնական առանձնահատկություններն են,

դ) կերպար ստեղծելու պարուրաձև եղանակը և զգեստի ձևը դինամիզմ են հաղորդում կոմպոզիցիային:




(1) 10. Ներկայացված պաստառներից ո՞րն է պատկանում Տուլուզ Լոտրեկի ստեղծագործություններին:


ա)



բ)



գ)



դ)



(1) 11. Ուսումնասիրելով արվեստի նմուշը որոշեք, թե ի՞նչ / ո՞վ է բացակայում նկարում պատկերված ինտերիերում, ձեր երևակայության մեջ վերականգնեք ամբողջական պատկերը և անվանեք արվեստի նմուշի հեղինակին:




ա) Ժան Ֆրանսուա Միլլե,

ծ) Գուստավ Կուրբե,

ց) Օնորե Դոմիե,

զ) Յան Վերմեեր:

(1) 12. Նկարում պատկերված է ավանգարդի նշանավոր ներկայացուցիչ, նկարիչ և լուսանկարիչ Ման Ռեի «Էնգրի ջութակը» լուսանկարը: Հիմնվելով ներկայացված նմուշի վրա, ըստ ձեզ, թվարկածներից բոլորից շատ ո՞ր ձևակերպումն է արտահայտում լուսանկարչության մասին ընդհանրացված տեսակետը:



- ա) արտահայտում է լուսանկարչության կարևորությունն առօրյա կյանքն արտացոլելու համար,
- բ) արտահայտում է, որ լուսանկարչությունը գեղարվեստական մեկնաբանության (ինտերպրետացիայի) լավագույն հնարավորություն է ընձեռում,
- գ) արտահայտում է լուսանկարչության նշանակությունը գիտության համար,
- դ) արտահայտում է, որ լուսանկարչությունը մանրակրկիտ ճշգրտությամբ է պատկերում ձևերը:



(1) 13. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը բնորոշ է Ջրուճիի երկրորդ ավետարանի մանրանկարին:



ա) Ֆոնը ոսկեգույն է, սակայն ոչ թե վերացական, այլ բնանկարի տարրերի միջոցով որոշ չափով կոնկրետացված:

ծ) Պատկերների դասավորվածությունը նկարի տարբեր պլաններում և այդպիսով տարածության տպավորության ստեղծումը դրսևորում է այս մանրանկարի առաջադիմական բնույթը:

զ) Տպավորիչ է կոմպոզիցիայի կառուցվածքը՝ կոմպոզիցիայի մանրամասնությունները խախտում են շրջանակի սահմանները և անհամեստ դուրս են գալիս կողքի լուսանցք:

զ) Ներկայացված նկարում կերպարների պատկերները ստատիկ են, զուրկ են դինամիզմից և արտահայտչականությունից (էքսպրեսիա):

(1) 14. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը քնորոշ չէ XI-XII դարերի Միքայել Հրեշտակապետի գեղանկարչական սրբապատկերին Սվանեթիից:



- ա) մարմնի և դիմագծերի մանրամասնումը,
- ծ) նկարի պլաստիկ բնույթը,
- գ) կատարման գծային ձևը,
- դ) գեղարվեստական կերպարի քնարական բնույթը:

(1) 15. Ներկայացված պատկերներից ո՞րն է ոճավորված:

ա)



ბ)



გ)



დ)





(1) 16. Հին Հունաստանում բարձր դասակարգության ժամանակաշրջանում Դորիական օրդերը կորցրեց իր առավելությունը: Ըստ Ձեզ, ինչո՞վ էր դա պայմանավորված:

Տ) Այդ ժամանակաշրջանում նման ավանդույթով շինարարությունը շարունակելու համար Աթենքը չունեի համապատասխան շինանյութեր:


Ծ) Դասական ավանդույթը նախընտրում էր ավելի բարակ և էսթետիկորեն հաճելի համամասնություններ:

Ճ) Պելոպոնեսյան պատերազմը ոչնչացրեց Հունաստանի բոլոր դորիական տաճարները:

Ծ) Մակեդոնական կայսրության ազդեցությունը խրախուսեց ճարտարապետներին մշակել շինարարական նոր տեխնիկա:

(1) 17. Ռելիեֆում հստակ զգացվում է ձևերի ծավալային մշակումը, սակայն միաժամանակ պահպանված են նկարի դեկորատիվ բնույթն ու մանրամասնությունների չափազանցված չափերը, ինչն ի տարբերություն այս ռելիեֆի առավել բնորոշ էր նախորդ դարաշրջանի ռելիեֆներին: Ներկայացված նմուշներից ո՞րն է համապատասխանում տրված նկարագրությանը:


ա)



բ)




գ)



դ)



(1) 18. Գեղարվեստական ո՞ր առանձնահատկությունը բնորոշ է Անրի Մատիսի ներկայացված գեղատեսիլ նկարին:



ա) Նկարում դրսևորվում է նկարչի հետաքրքրությունը իսլամական ձեռագրերի մանրանկարների նկատմամբ:

ծ) Գույնը տեղային է, պատկերը՝ հարթային:

զ) Եզրագծային նկարը ցայտուն է, գունային լուծումը հիմնված է կոնտրաստի վրա:

զ) Տարածությունը ստեղծվում է հեռանկարի օրենքների պահպանմամբ:




(1) 19. Ո՞ր պատկերն է ներկայացված կոնտրաստի դիրքով (հակադիրք):

ա)




ծ)



ժ)



զ)



№ 20-25 առաջադրանք (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 1 միավոր): «Ճշմարիտ է - Սխալ է»

**Առաջադրանքի հրահանգ.** Ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

**Դիտողություն.** Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողե՛ք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրե՛ք և համապատասխանեցրե՛ք համարժեք տերմին և/կամ բառ:


Նմուշ.

დავადება №               

ფაქტობრივად მქარაობს, ხარკი მოხორციელებული ფა-  
ქტი მონაწილეობს, გრძელდება.

(1) 20. Վանիտասը (ունայնություն) բնանկարի տեսակ է, որը ցույց է տալիս կյանքի ծագումը:

(1) 21. Լադո Գուդիաշվիլիի ներկայացված գրաֆիկական կոմպոզիցիան մարտական տեսարանի նմուշ է:






(1) 22. Լուսանկարում ներկայացված է գոթական սյունասրահ (պորտիկ):



(1) 23. Պիեռո դելլա Ֆրանչեսկան Ֆեդերիգո դա Մոնտեֆելտրոյի և Բատիստա Սֆորցայի դիմանկարները ներկայացրել է 3/4-ում:



(1) 24. Պաբլո Պիկասոյի «Գեռնիկան» պոլիքրոմ գեղանկարչության նմուշ է:






(1) 25. Յան վան Էյքը կոմպոզիցիայում հնտորեն պատկերում է առատ վարագուրումը:



(7) № 26 Առաջադրանք. *Գործնական աշխատանք*  
Հրահանգ.

Լուսանկարում ներկայացված է հոլանդացի նկարիչ Դիկ Կետի նատյուրմորտը: Ստեղծեք այս կոմպոզիցիայի մեկնաբանությունը (ինտերպրետացիան), հնարավոր է նաև երկրաչափական, որտեղ նախատեսված կլինեն նկարչի կիրառած ռակուրսն ու առարկաները: Նախատեսելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը պատկերը տեղադրեք նկարի հարթության վրա: Պահպանեք առարկաների համապատասխան համամասնությունները, առարկաները տարբերակեք տոնային առումով: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:



(1) Առաջադրանքներ № 27-29. Առաջադրանք. *Ժամանակագրության որոշում:*

**Առաջադրանքի հրահանգ.** Դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշներն, ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:



(1) 27. Ինտերիերները (շենքի ներսակողմ) դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ.

1.




2.



3.



4.





(1) 28. Վրացական նկարչության նմուշները դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ.

1.



2.



3.



4.





(1) 29. Միջնադարի վրացական ռելիեֆի նմուշները դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ.

1.



2.



3.








4.





(3) № 30 Առաջադրանք. Համապատասխանության որոշում՝ A սյունակում թվարկված նկարիչներին համապատասխանեցրեք B սյունակում ներկայացված նկարիչների ոճերին և թեմային համապատասխան ճարտարապետական մեկնաբանությունները (ինտերպրետացիաներ): Հաշվի առեք, որ մեկ նկարչին համապատասխանում է միայն մեկ նկար:

A	1. Սալվադոր Դալի	2. Ռոյ Լիխտենշտեյն	3. Էնդի Ուորհոլ		
B	<p>ա.</p> 	<p>ծ.</p> 	<p>ծ.</p> 	<p>Յ.</p> 	<p>Թ.</p> 

(3) № 31 Առաջադրանք. Համապատասխանության որոշում՝ B սյունակում տրված մանրանկարները համապատասխանեցրեք A սյունակում թվարկած երկրներին: Հաշվի առեք՝ մեկ երկրին համապատասխանում է միայն մեկ մանրանկար:


A.

1. Հնդկաստան

2. Ճապոնիա

3. Պարսկաստան

B. ս.



ծ.



ճ.



Թ.



Յ.



## Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:

Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընկալելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:

Գրավոր աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական, խուսափեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:

Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և անկախ մտածողության ունակության համաձայն:

Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:

Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:

Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել փակագծերի մեջ կամ խազմգել:



(4) № 32 Առաջադրանք. Ներկայացված արվեստի նմուշները հին հունական առասպելի թեմայով ստեղծված նկարիչների մեկնաբանություններն (ինտերպրետացիա) են: Տրված նկարներից ընտրե՛ք նմուշներից մեկը, անվանե՛ք, որ առասպելն է մարմնավորված հեղինակի կողմից: Վերլուծե՛ք ստեղծագործությունն ու որոշե՛ք՝

1.



2.






3.



4.




ա. Ի՞նչն է թույլ տալիս բացահայտել առասպելը ձեր ընտրած պատկերում (անցկացրեք զուգահեռներ բովանդակության և գեղարվեստական մարմնավորման միջև):

ծ. Ո՞ր գեղարվեստական տեխնիկայով և հնարքներով է բացվում առասպելի գաղափարը:

(15) № 33 Առաջադրանք. *Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:*

Ըմբռնե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը



**Կատարեք առաջադրանքն, ըստ ցուցումների.**

**(3) 33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք կոմպոզիցիան: Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշե՛ք, թե կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

**(3) 33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե ի՞նչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարում գեղարվեստական պատկերի բնույթ ստեղծելու համար:





(3) 33.3 Գեղարվեստառճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք հոսանքը, որոշեք, թե ո՞ր երկրի և դարաշրջանի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

(3) 33.4 Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտե՛ք Ձեր վերաբերմունքը, մտորե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) 33.5 Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ: Դիտարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և ստեղծագործությանը համապատասխանող այլ համատեքստում:

